



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
 հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
 հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
 էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ապրիլի 2023 թվականի N 131-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ,
 ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ
 ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
 ՕԲՅԵԿՏՆԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 19-ի N23-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-026-0006-0008 կադաստրային ծածկագրով 0.02 հեկտար մակերեսով հողամասի /հասցե՝ մարզ Շիրակի, Աշոցք համայնք, գյուղ Բավրա, 8-րդ փողոց, 2/1 հողամաս/ և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության 08-075-0003-0006 1,14 հեկտար մակերեսով հողամասի /հասցե՝ մարզ Շիրակի, Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 2-րդ փողոց, 2-րդ փակուղի, 4 հողամաս/ օտարման աճուրդը անցկացնել՝ 2023 թվականի մայիսի 26-ին, ժամը 12⁰⁰-ին

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ մարզ Շիրակ Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, Հրապարակ 1):

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասերի աճուրդը կազմակերպելու համար ստեղծել աճուրդային հանձնաժողով, հետևյալ անհատական կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Մանուկյան – Աշոցք համայնքի ղեկավար,

անձնաժողովի անդամներ՝

Լևոն Կոնյան – Աշոցք համայնքի ղեկավարի տեղակալ,

Հովհաննես Մարգարյան – Աշոցք համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ),

Համլետ Ավետիսյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

Կարապետ Հակոբյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ,

Պավլիկ Սումբույան – Բավրա բնակավայրի վարչական ղեկավար,

Սերգեյ Եգանյան – Ղազանչի բնակավայրի վարչական ղեկավար,

Ռիտա Մկրտչյան – Աշոցք համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /ժամանակավոր պաշտոնակատար/:

Լուսինե Սիմավոնյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ,

3. Աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության կառավարության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային <http://www.azdarar.am> կայքի «Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ» բաժնում և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել հայտարարություն՝ սակարկությունների անցկացման տեղի, օրվա, ժամի, հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մեկնարկային գինի, չափի, աճուրդի քայլի, նախավճարի չափի, օգտագործման նպատակի, ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայության մասին:

4. Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը համաձայն N հավելվածի:

5. Աճուրդը անցկացնելու համար աճուրդավար հաստատել աճուրդային հանձնաժողովի անդամ, Աշոցք համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ՝ Ռիտա Մկրտչյանին, արձանագրող՝ աճուրդային հանձնաժողովի անդամ, Աշոցք համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ՝ Լուսինե Սիմավոնյանին:

6. Աճուրդային հանձնաժողովին՝ Հողամասերի աճուրդը կազմակերպել՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-70-րդ հոդվածներով, «Հրապարակային